«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/16-1

ք. Երևան «25» 06 2020թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամն ի դեմս ռեկտոր Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդիսար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Մ. Գաբրիելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 289350 /երկու հարյուր ութսունինը հազար երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում, եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի ազգային	«Մեդիսար» ՍՊԸ
ագրարային համալսարան	ՀՀ, ք. Երևան, Գետառի 4/9
ք. Երևան, Տերյան 74	«Ինեկոբանկ» ՓԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ	Հ/Հ՝ 20500224158110 01
Հ/Հ 247010053103	ՀՎՀՀ՝ 02555635
ՀՎՀՀ 01507028	
Ռեկտոր՝ ---------- Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/16-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
2	24311190/1	Գալիկա թթու	Галиевая кислота, G7384, Sigma Aldrich	3,4,5,-տրիհիդրոքսիբենզոլաթթու, նախատեսված է քիմիական անալիզների համար:Մաքրությունը առնվազն 98%, անջուր:	կգ	600000	60000	0.1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	0.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
5	15871100/1	Քացախաթթու	Уксусная кислота, Улисс	Անգույն, սուր, յուրահատուկ հոտով: Փաթեթավորումը՝ 1լ ապակյա տարաներով, հերմետիկ, գործարանային փաթեթավորմամբ: Մաքրությունը ≥ 95 %	լիտր	1000	1000	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
6	33691849/1	Ացետոն	Ацетон, Мономер	Ճարպերի լուծելիության համար: Անգույն, հեշտ ցնդող հեղուկ, բնութագրական սուր հոտով: Խտությունը՝ 0.79± 0.01 գ/սմ3 : Ստանդարտ պայմանների համար 250C, 100 կՊա: 1լ ապակե տարաներով: Հրավտանգ է, պահպանել անվտանգության կանոնները:	լիտր	1000	11000	11	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	11	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
10	33691871/1	Դիէթիլ եթեր	Диэтиловый эфир, База N1	99% մաքրության: Արտաքին տեսքը՝ թափանցիկ հեղուկ յուրահատուկ հոտով: Քիմիական սինթեզների ընթացքում նյութերի անջատման և սինթեզված նյութերի վերաբյուրեղացման համար: Փաթեթավորումը 1լ. տարաներով:	լիտր	4500	22500	5	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
13	24321660/2	Ագար-Ագար/ քիմիական մաքուր/	Агар-Агар/ Химическая Чистота /, Stanchem	Քիմ. բանաձև(C12H18O9)n: Դեղնասպիտակավուն բազմաշաքարային փոշի, որը ստանում են ծովային մի քանի տեսակի կարմիր ջրիմուտներից: Լուծվում է ջրում 95-100 աստիճանում: Օգտագործվում է միկրոբիոլոգիական միջավայրեր պատրաստելու համար:	գրամ	25	75000	3000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	3000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
17	33691163/4	Սննդարար ագար	Пищевой агар, Biolab	Պինդ սննդային միջավայր բակտերիաների աճման համար, սպիտակ փոշի լցված պլաստմասե տարաներում: Լուսազգայուն, պահպանումը 18-25 C: Պտրաստվում է ավտոկլավում, 121 C, 1.5 ճնշման պայմաններում: Հանձնելու պահին ունենա առնվազն 1 տարի պիտանելիության ժամկետ:	հատ	20000	20000	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

				Փաթեթավորումը գործարանային 0,5 կգ-ոց տուփերով: Հերմետիկ փակված:							
18	33691163/6	Չոր սննդարար ագար	Сухой питательный агар, Biolab	Պինդ սննդային միջավայր էնտերիկ բակտերիաների աճման համար, վարդագույն փոշի լցված պլաստմասե տարաներում: Լուսազգայուն, պահպանումը 18-25 C: Պտրաստվում է ավտոկլավում, 121 C, 1.5 ճնշման պայմաններում: Հանձնելու պահին ունենա առնվազն 1 տարի պիտանիության ժամկետ: Փաթեթավորումը գործարանային 0,5 կգ-ոց տուփերով: Հերմետիկ փակված	հատ	20000	20000	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
19	33691163/7	Ագար չոր սննդային	Агарсухое питание, Biolab	Չոր սննդային ագար (SPA) փոշու տեսքով՝ տարբեր տեսակի միկրոօրգանիզմների աճեցան համար, ընդհանուր օգտագործման բակտերիոլոգիական սննդանյութեր պատրաստելու համար, անհրաժեշտության դեպքում, կարելի է հարստացնել շիճուկով, արյունով, ածխաջրերով, աղերով, ընտրովի հավելումներով: 1 սրվակը պարունակում է 500 գր:	հատ	20000	20000	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
20	33691163/8	Արգանակ չոր սննդային	Бульон сухого питания, Biolab	Մսային ֆերմենտային պեպտոնի հիման վրա սննդարար արգանակ՝ միկրոօրգանիզմների հարստացման և աճեցման համար: 1 սրվակը պարունակում է 500 գր:	հատ	17500	17500	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
23	32351310/1	Պարաֆիլմ	Парафильм, WVR	Հերմետիկ թափանցիկ ձգվող թաղանթ, լայնությունը՝ 10սմ, երկարությունը՝ 38մ: Ձգվում է իր նախնական չափից երկու անգամ ավել: Կայուն է թթուների, հիմքերի և որոշ լուծիչների նկատմամբ, թունավոր չէ: Հալման ջերմաստիճանը 60˚C: Նախատեսված է փորձանոթների, կոլբաների և այլ տարաների հերմետիկ փակման համար՝ խցանների և կափարիչների փոխարեն: Մակերեսին չունի սոսնձող նյութեր, հանելուց հետքեր չի թողնում: Չափսը՝ 50x75մմ:	հատ	20000	20000	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
33	24311721/1	NH4OH ամոնիումի հիդրօքսիդ	NH4OH гидроксид аммония, База N1	Խիտ, 28÷30 % NH3-ը ջրում: Փաթեթավորումը հերմետիկ, գործարանային, մուգ ապակյա տրայով 1լ-անոց:	լիտր	800	800	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
34	24311260/1	NaOH նատրիումի հիդրօքսիդ	NaOH гидроксид натрия, Ֆրանսիա	Սպիտակ, հիգրոսկոպիկ, գրանուլներով, պլաստմասսե հերմետիկ գործարանային փաթեթավորմամբ, 0,5 կգ տարրայով: Մաքրությունը ≥ 85 %:	կգ	1000	500	0.5	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	0.5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
35	24321650/1	Գլիցերին	Глицерин, KH Chemicals	Անգույն, անհոտ, մածուցիկ հեղուկ, խտությունը 1,26 գ/սմ³: Ապակյա տարայով, փաթեթավորումը հերմետիկ, գործարանային, 250 գ-անոց տարայով:	կգ	1200	600	0.5	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	0.5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
37	24311600/1	Բորաթթու H3BO3	Борная кислота H3BO3, Stanchem	Սպիտակ, բյուրեղային փոշի: Փաթեթավորումը՝ հերմետիկ, գործարանային, 0,5 կգ տարայով , մաքրությունը ≥ 96 %,	կգ	1000	500	0.5	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	0.5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

38	33611430/2	Կալիումի յոդիդ KI2	Калий йодистый KI2, Stanchem	Սպիտակ, բյուրեղային փոշի, լավ լուծվում է ջրում, սպիրտում: Փաթեթավորումը՝ հերմետիկ, գործարանային, 100 գ տարաներով, մաքրությունը ≥ 90 %	կգ	30000	3000	0.1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	0.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
44	33691138/1	C6H12O6 (գլյուկոզ)	C6H12O6 (глюкоза), База N1	Սպիտակ,փոշենման պինդ նյութ: Փաթեթավորումը գործարանային՝ պլաստմասե տարայով 500 գ-անոց, մաքրությունը ≥ 90 %	հատ	1000	1000	1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
45	24311129/1	Zn-ի փոշի ցինկի փոշի	Цинковый порошок цинка, Թիզաբ	Արծաթագույն փոշի ապակյա տարայով 500գ-անոց:	գրամ	6	1200	200	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	200	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
46	24321863/1	Հեքսան C6H12	Гексан C6H12, База N1	Անգույն, յուրահատուկ հոտով հեղուկ: Եռ. ջերմ. 68 °C, խտությունը 0.65 գ/սմ³: Փաթեթավորումը գործարանային՝ պոլիէթիլենային տարայով 0,5լ-անոց: Օրգանական լավ լուծիչ է, օգտագործվում է նաև նյութերի մաքրման համար: մաքրությունը ≥ 90 %	լիտր	2500	13750	5.5	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	5.5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
49	33691862/1	Հիդրազին մոնոհիդրատN2 H4	Гидразин моногидрат N2H4, База N1	Փաթեթավորումը՝ ապակյա տարայով 100 մլ-անոց, մաքրությունը ≥ 70 %, անգույն, հիդրոսկոպիկ լուծույթ, ամոնյակի թույլ հոտով:	կգ	10000	1000	0.1	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	0.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

** Ապրանքը պետք է լինի նոր, տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է վաճառողը, Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Հրավերով նախատեսվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, եթե վերջիններս կիրառելի են առաջարկվող ապրանքների համար: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

ԳՆՈՐԴ
Հայաստանի ազգային
ագրարային համալսարան
ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր ----------Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիսար» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գետառի 4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 20500224158110 01
ՀՎՀՀ՝ 02555635

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
20 թ. « » կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/16-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	24311190/1	Գալիկա թթու	-	-	-	-	-	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000
5	15871100/1	Քացախաթթու	-	-	-	-	-	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
6	33691849/1	Ացետոն	-	-	-	-	-	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000
10	33691871/1	Դիէթիլ եթեր	-	-	-	-	-	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500
13	24321660/2	Ազար-Ազար/ քիմիական մաքուր/	-	-	-	-	-	75000	75000	75000	75000	75000	75000	75000	75000
17	33691163/4	Սննդարար ագար	-	-	-	-	-	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
18	33691163/6	Չոր սննդարար ագար	-	-	-	-	-	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
19	33691163/7	Ագար չոր սննդային	-	-	-	-	-	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
20	33691163/8	Արգանակ չոր սննդային	-	-	-	-	-	17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500
23	32351310/1	Պարաֆիլմ	-	-	-	-	-	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
33	24311721/1	NH4OH ամոնիումի հիդրօքսիդ	-	-	-	-	-	800	800	800	800	800	800	800	800
34	24311260/1	NaOH նատրիումի հիդրօքսիդ	-	-	-	-	-	500	500	500	500	500	500	500	500
35	24321650/1	Գլիցերին	-	-	-	-	-	600	600	600	600	600	600	600	600
37	24311600/1	Բորաթթու H3BO3	-	-	-	-	-	500	500	500	500	500	500	500	500
38	33611430/2	Կալիումի յոդիդ KI2	-	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
44	33691138/1	C6H12O6 (գլյուկոզ)	-	-	-	-	-	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
45	24311129/1	Zn-ի փոշի ցինկի փոշի	-	-	-	-	-	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200
46	24321863/1	Հեքսան C6H12	-	-	-	-	-	13750	13750	13750	13750	13750	13750	13750	13750
49	33691862/1	Հիդրազին մոնոհիդրատN2H4	-	-	-	-	-	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000

ԳՆՈՐԴ
Հայաստանի ազգային գրքարային համալսարան
Ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 02507028
Ռեկտոր ----------Վ.
ՈՒՌՈՒՏՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիապար» ՍՊԸ
ՀՀ, Ք. Երևան, Գետառի 4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500224158110 01
ՀՎՀՀ 02555635

/ստորագրություն/
Կ.Տ